«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետությունը աշխարհագրության դասաժամին **"Հասարակական աշխարհագրություն " դասընթացն** ուսումնասիրելիս
ԱՌԱՐԿԱ	Աշխարհագրություն
ՀԵՂԻՆԱԿ	Հռհաննիսյան Կարինե
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ափնայի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	3
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ	5
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ	10
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	15
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	17

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքի արդիականությունը: Այս աշխատանքի ուսումնասիրման արդիականությունն ու կարևորությունը կայանում է նրանում, որ ցանկացել ենք ընթերցողին ու ուսկնդրողին ներկայացնել աշխարհագրություն գիտության ունեցած կարևոր դերն ու տեղը մարդու կյանքում և նրա առանձնակի կապը մեր կյանքի հետ: Ինչպես գիտեք, աշխարհագրությունը մյուս գիտությունների նման ևս ինքնուրույն է: Այն նույնպես ճյուղավորված է մի շարք ուղղությունների, ինչպես տնտեսագիտությունը, պատմությունը, մշակույթը, բժշկությունը, փիլիսոփայությունը և մյուս գիտությունները: Աշխարհագրություն գիտության ուսումնասիրման ու դասավանդման մեջ շատ կարևոր դեր է վերապահվում մանկավարժներին, աշխարհագրության ուսուցիչներին և դասախոսներին: Դասավանդման համար նրանք այսօր բացի ավանդական մեթոդներից կրառում են բազմաթիվ նորարարկան մեթոդներ ինչպիսիք են թվային տեխնոլոգիաների կիրառումը դասաժամերին: Այս պարագայում անչափ կարևոր է, որ աշխարհագրության ուսուցիչները լավ տիրապետեն իրենց դասավանդող առարկային և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, այլապես յուրաքանչյուր թերությունը առաջին հերթին բացասական ազդեցություն կունենա գալիք աշակերտական սերունդների վրա, որոնց մոտ աշխարհագրություն գիտության պատկերացումն հստակ չի լինի:

Աշխատանքի նպատակներն ու խնդիրներն: Աշխատանքի նպատակն է բացահայտել թվային տեխնոլոգիաներով ուսուցման առավելությունները աշխարհագրության դասին: Աշխատանքի խնդիրն է՝

1. վերլուծել և բացահայտել աշխարհագրություն գիտության էությունը և դրա ունեցած կարևորությունը մեր օրերում.
2. Վերլուծել ՏՀՏ-ի կիրառումը կրթական գործընթացում
3. Բացահայտել դասընթացի ոուսումնական նյութերի հավաքածուն
4. Կիրառել տարբեր ինտերակտիվ մեթոդներ դասերի անցկացման համար

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատության օբյեկտն է թվային տեխնոլոգիաները, իսկ ուսումնասիրության առարկան՝ թվային տեխնոլոգիաներով աշխարհագրության դասի ուսուցումն է:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է նախաբանից, հետազոտական համատեքստից, գործնական համատեքստից, տվյալների մշակում և վերլուծություն բաժնից, ամփոփումից և գրականության ցանկից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ժամանակակից աշխարհում կտրուկ աճել ու ընդլայնվել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունները գլոբալ համացանցի (ինտերնետ) ի հայտ գալով ու մարդու գործունեության բոլոր որոլորտները, այդ թվում և կրթության, խոր ներթափացմամբ: Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման իննովացիոն մեթոդների զարգացման համար:

Միաժամանակ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներմուծումը ուսուցման գործընթացում ձևավորում է մի շարք հիմնախնդիրներ, որոնք կապված են համապատասխան ծրագրային ապահովման մշակման, էլեկտրոնային միջոցների բովանդակային հագեցվածության և կրթության ոլորտում օգտագործման հետ:

Վերջին շրջանում արվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնցում հիմնավորվել են ուսուցման էլեկտրոնային միջոցների տեսական մշակման և գործնական կիրառման հնարավորությունները:

«Էլեկտրոնային ուսուցում»-ը (Electroning Learning, կրճատ՝ E-learning) վերջին տասնամյակում լայն կիրառում ունի: Այն միավորում է ուսուցման գործընթացում կիրառվող ՏՀՏ ոլորտի մի շարք հասկացություններ (մուլտիմեդիա, web տեխնոլոգիաներ, online տեխնոլոգիաներ և այլն): Կրթական ոլորտում աստիճանաբար և հաստատուն տեղ է գրավում «հեռավար ուսուցում» հասկացությունը. կյանքի է կոչվում տարածության մեջ ուսուցման գաղափարը:

Աշխարհագրությունը պատկանում է այն գիտությունների շարքին, որոնք հազարամյակներ շարունակ գոյություն ունեն, քաղաքացիական իրավունք են ստացել և մարդկության առաջընթացի գործում մեծ դեր խաղացել: Աշխարհագրության, որպես գիտության, ձևավորումը և նրա անվան առաջացումը մեզ հասցնում է Ալեքսանդրիա, հելլենիստական մշակույթի ծաղկման ժամանակաշրջան: Դա այն դարաշրջանն է, երբ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով Ք.ա. 324 – 323 թթ. հունական (հելլենիստական) մշակույթը տարածվում և միահյուսվում է Արևելքի մշակույթի հետ: Հելլենիզմը

տարածվեց ոչ միայն Եգիպտեսում, այլև Առաջավոր Ասիայի շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

Աշխարհագրությունն այն հիմնարար գիտություններից է, որի վրա էլ ձևավորվում է շրջապատող աշխարհի բացահայտման գիտությունը: Աշխարհագրության ուսումնասիրության գլխավոր և կարևորագույն առարկան համարվում է շրջակա միջավայրի ուսումնասիրումը՝ յուր բազմակողմանիությամբ և տարբերությամբ հանդերձ[1]:

Աշխարհագրության կարևորագույն առաջադրանքների թվին են պատկանում.

- օբյեկտների տեղակայման հստակ բացահայտումը,
- տեղակայման օրինաչափությունների բացահայտումը,
- մարդու և բնության միջավայրի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը և այլն:

[1] Տե՛ս «География в современном мире» – http://files.school-collection.edu.ru/dlrstore/00000c51-1000-4ddd-517d-3600483aebf5/01.htm

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 7-րդ դասարանը: Դասարանի աշակերտները 21-ն են՝ 10 աղջիկ և 11 տղա: Քանի որ այս տարիքի երեխաները թվային տեխնոլոգիաներին շատ լավ են տիրապետում ,այդ պատճառով ընտրել եմ այս տարիքային խումբը: Այս կարծիքը ապացուցման կամ հաստատման կարիք չունի, սակայն առարկայի իմացությունը և առարկայական գիտելիքներին լավ տիրապետելը, դեռևս չի ապահովում աշակերտների լիակատար դասին ներառելը: Ուսուցիչը կարող է լինել աշխարհագրության հինալաի մասնագետ, սակայն դպրոցում չկարողանա իր ունեցած գիտելիքները արդյունավետ փոխանցել աշակերտներին[2]:

Դիտարկման արդյունքների հիման վրա պարտադիր կատարում են եզրակացություններ:

- Փորձերի կազմակերպումը պահանջում է որոշակի կանոնակարգ՝ փորձերը կազմակերպվում են կահավորված աշխարհագրական կաբինետներում, իսկ սարքերը պետք է լինեն անվտանգ:
- Սարքերն ու սարքավորումները պետք է լինեն հնարավորինս պարզ:
- Ուսուցիչը պետք է նախապես բացահայտի փորձի նպատակն ու խնդիրները,
- Փորձի անցկացման ընթացքում ուսուցիչը պետք է տանի ակտիվ բացատրական աշխատանք:
- Փորձի ավարտին ուսուցչի հետ աշակերտները պետք է կատարեն եզրակացություններ և հետևություններ:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում ձևավորվել է հստակ մի կարծիք, որի համաձայն՝ անհրաժեշտ է աշխարհագրության ուսուցման գործընթացում կիրառել ստուգման տարբեր եղանակներ և ձևեր, որոնց զուգորդումը կազմում է վերահսկման հիմնական տեսակները: Գիտելիքների և կարողությունների ստուգումը իրականացվում է հետևյալ երկու եղանակներով՝

- բանավոր ստուգում,
- գրավոր ստուգում:

Հետազոտական աշխատանքս յոթերորդ դասարանում վերաբերվում է հետևյալ թեմաներին՝

[2] Տե՛ս Միհաբյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան, 2013, էջ 38:

- բնակչության ռասայական ազգային և կրոնական կազմին
- Տարաբնակեցում քաղաքային և գյուղական բնակավայրերին
- Բնական պայմաններ և ռեսուրսներ բնական ռեսուրսների խմբավորում

Թեմաների ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները՝

1. ներկայացնել ռասսա հասկացությունը
2. վերլուծել առանձին ռասսաների նկարագիրը
3. ծանոթացնել ռասաների աշխարհագրական տեղաբաշխման հետ
4. ուսումնասիրել աշխարհի բնակչության ազգային կազմը
5. վերլուծել աշխարհի բնակչության կրոնական կազմը

Երեխաների մոտ պատկերացում ձևավորել տարաբնակեցման մասին:

1. Սովորեցնել, Ի՞նչ է տարաբնակեցումը: Որո՞նք են տարաբնակեցման ձևերը:
2. Ե՞րբ և ի՞նչ գործոնների շնորհիվ են զարգացել քաղաքները:
3. Նշե՛ք քաղաքների զարգացման առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում:
1. Սովորողներին ծանոթացնել բնական պայմաններ և բնական ռեսուրսներ հասկացությունների հետ
2. Պատկերացում ձևավորել բնական պայմանների խմբավորման մասին
3. ներկայացնլ բնական ռեսուրսների խմբավորման եղանակները
4. տալ ռեսուրսաապահովածության հասկացությունը ևդ ռահաշվարկման մեխանիզմների մասին պատկերացում

Նպատակներից ելնելով ակնկալում եմ հետևյալ վերջնարդյունքները՝

1. Սովորողները կկարողանան նկարագրել Ի՞նչ է ռասան: Որո՞նք են ռասայական հատկանիշները և տեղաբաշխումը կկարողանա
2. Սովորողները կկարողանան օգտվել թվային նո տեխնոլոգիաներց
3. Սովորողները կկարողանան հաշվարկել աշխարհի բնակչության , ազգային և կրոնական կազմով պայմանավորված հիմնախնդիրների հետևանքները, դրանց լուծման ուղիների կարևորությունը մարդկության բարեկեցիկ ապագայի կառուցման համար:
1. Սովորողները կկարողանան նկարագրել Ի՞նչ է տարաբնակեցումը: Որո՞նք են քաղաքային և գյուղական բնակավայրերը

2. Սովորողները կկարողանան պարզել որո՞նք են քաղաքների և քաղաքների բնակչության բաժնի աճի՝ որպես համաշխարհային երևույթի դրսևորման հիմնական ուղղությունները
1. Սովորողները կկարողանան նկարագրել բնական ռեսուրսների տեսականին և քանակը
2. Սովորողները կկարողանան պարզել ի՞նչ է բնական պայմանը, ի՞նչ է բնական ռեսուրսը

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Մեր աշխատանքի հետազոտական մասում փորձել ենք բացահայտել ինտեգրացված դասերի ուսուցման մեթոդները 7-րդ դասարանի աշխարհագրության դասաժամերին: Այն իրականացնելու համար պահանջվում են նախապատրաստական լուրջ ջանքեր, սակայն փորձը ցույց է տվել, որ այդ դասերի արդյունավետությունը բավականին բարձր է: Հիմնականում երկու փոխկապակցված առարկաների դասի ընթացքում՝ 45 րոպե ունենում ենք աշխատող, ներդաշնակ սովորողներ:
Իմ համոզմամբ ինտերակտիվ մեթոդների կիրառումը աշխարհագրության դասընթացին կարող է զարգացնել երեխաների թվային տեխնոլոգիաներց օգտվելու հմտությունները, բնակչության ռասայական ազգային և կրոնական կազմի մասին ճիշտ պատկերացումներ, բնական պայմաններ և բնական ռեսուրսների խմբավորում ճիշտ կողմնորոշումը:

Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը հնարավորություն տվեցին հասնել նոր մակարդակի, բացահայտել տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, աշխարհագրության դասը եղավ մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը համապատասանեց սահմանային ծավալին: Սովորողները ստացան այնքան տեղեկություն, որ չխճճվեցին նյութերում:

Ինտեգրացված դասը նախապես պլանավորված էր:

Այս նպատակով ընտրել եմ 7-րդ դասարանի հետևյալ թեմաները՝

- բնակչության ռասայական ազգային և կրոնական կազմին

- Տարաբնակեցում քաղաքային և գյուղական բնակավայրերին
- Բնական պայմաններ և ռեսուրսներ բնական ռեսուրսների խմբավորում

Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում:

Դասի առաջին փուլը «խթանումն» է: Այս փուլի ընթացքում իրականացվում է աշակերտների ակտիվացում՝ թեմայի մասին ունեցած տեղեկատվությունը վերհիշելու միջոցով: Սա սովորողներին ստիպում է քննության ենթարկել սեփական գիտելիքները և միևնույն ժամանակ խորհել բուն թեմայի մասին:

- Որպեսզի աշակերտները հեշտ մտապահեն բնակչության ռասայական ազգային և կրոնական կազմի մասին տեղելությունը, թվային ուրվագծային քարտեզի վրա նշում ենք ռասաների տեղաբախման հիմնական շրջանները:

Դասի հաջորդ փուլը իմաստի ընկալումն է: Ինչպես վերը նշվեց, ընտրվում է ինտերակտիվ մեթոդը: Ըստ այդ մեթոդի՝ դասարանը բաժանվում է 4 խմբերի: Օրինակ՝ խմբերի 1 համարները հավաքվում են մեկ սեղանի շուրջը, 2-ները, 3-ները, 4-ները՝ այլ սեղանների շուրջը:

Նախ դասարանին հաձնարարվում է կարդալ դասանյութը: Այնուհետև խմբերին բաժանվում են թերթիկներ, որոնց վրա գրված են, թե տվյալ խումբը հարցի ո՛ր կողմը պետք է ներկայացնի:

Խմբի յուրաքանչյուր անդամ ընտրվում է որևէ ենթաթեմայի փորձագետ, որը մյուս խմբերի անդամներին սովորեցնելու է իր ենթաթեման: Տրվում է 15 րոպե ժամանակ: Ավարտելուց հետո ամփոփվում են արդյունքները:

Այսօր տեղեկատվությունը դարձել է համաշխարհային տնտեսության անբաժանելի մասը, իսկ կրթությունը եղել և մնում է յուրաքանչյուր մարդու անձնական ու մասնագիտական հաջողության հիմքը: Մեր ժամանակներում, անշուշտ, փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները. բազային գիելիքներից և նոր գիտելիքների մշտական ձեռք բերումից բացի ժամանակակից աշխատողը պետք է կարողանա նաև արդյունավետ կիրառել տեղեկատվական աղբյուրներն ու պաշարները: Այսօր նրանից պահանջվում է ստեղծագործական մտածողություն, որոշումներ կայացնելու և ողջ կյանքում սովորելու կարողություն:Տեխնոլոգիաների ներդրման նպատակներն ու խնդիրներն

անընդհատ փոփոխվում են: Այսօր բազմաթիվ նոր առարկաների նմերմուծումը ուսումնական պլան իրականացվում է ինտեգրման սկզբունքով: Բնական է, որ տեխնոլոգիաների մուտքը ուղեկցվում է նման նոր կապերի ստեղծմամբ, ամրապնդմամբ և որակական նոր մակարդակի ապահովմամբ: Նախագծերի մեթոդը , Վեբ որոնումը , ուսուցման կարճատև դասընթացներն իրենց հիմքում ինտեգրված ուսումնառության ծրագրեր են:Այստեղ ոչ միայն տվյալ առարկայի դասավանդման մեջ տեխնոլոգիաների ինտեգրում է ենթադրվում, այլև տեխնոլոգիաների ներդրմամբ այլ առարկաների ավելի արդյունավետ ինտեգրում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինտերակտիվ ուսուցման մեթոդի կիրառությունը աշխարհագրության դասաժամերին:

Ակտիվ մեթոդի կրառությունը աշխարհագրության ժամերին ներկայացնելու համար դիտարկենք երեք դասերի օրինակներ:

Դիտարկում ենք 7-րդ դասարանի <<Հասարակական աշխարհագրություն>> դասընթացի երեք դասեր՝

- դաս.9 բնակչության ռասայական ազգային և կրոնական կազմ Հավելված 1)
- դաս.10 Տարաբնակեցում քաղաքային և գյուղական բնակավայրեր Հավելված2)
- դաս 12 Բնական պայմաններ և ռեսուրսներ բնական ռեսուրսների խմբավորում Հավելված 3):

Դասը ակտիվ մեթոդներով անցկացնելու համար անրաժեշտե դասի ընթացքում իրականացնել հետևյալ առաջադրանքները;

- Թվային ուրվագծային քարտեզի վրա նշել ռասաների տեղաբախման հիմնական շրջանները:

ավստրոլոիդ, մոնղոլոիդ,եվրոպոիդ,նեգրոիդ



- Գրել հետևյալ երկրներում գերիշխող դավանանքը՝ նշելով նաև համաշխարհային կրոնի ուղղությունը. Արգենտինա, Իսրայել, Ճապոնիա, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ, Իրան, Սաուդյան Արաբիա, Ալժիր, Նիգեր, Վիետնամ, Նիդերլանդներ, Կազախստան, Ուկրաինա, Թուրքիա, Ուրուգվայ, Վրաստան, Բրազիլիա, Ավստրալիա, Մոնղոլիա, Հունաստան, Լեհանստան, Հս. Կորեա, Հայսատան:

Ուրվագծային քարտեզի վրա նշել բազմազգ (պոլիեթնիկ) և միազգ (մոնոէթնիկ) երկրներ:

Հայաստան ,Արգենտինա , Իսրայել , ԱՄՆ , Իրան , Ճապոնիա, Չինաստան ,Ռուսաստան , Ֆրանսիա , Կանադա , Թուրքիա, Ուրուգվայ , Վրաստան , Բրազիլիա , Ավստրալիա , Մոնղոլիա, Հունաստան , Լեհանստան , Սաուդյան,Արաբիա, Ալժիր, Նիգեր ,Վիետնամ , Նիդերլանդներ , Ղազախստան:

- Նշել աշխարհի խոշորագույն լեզվաընտանիքները, լեզվախմբերը և լեզունները:

Գնահատման կարգը.

Գնահատվում է սովորողի մտածելու, համադրելու, տարբեր տեսակետներ հայտնելու, իր տեսակետը ձևակերպելու և գիտական փաստերով, օրենքներով, օրինաչափություններով հիմնավորելու՝ օգտվելով տարբեր սկզբնաղբյուրներից, նաև իր փորձից, ունակություն-ները, ինչպես նաև քարտեզից օգտվելու և ուրվագծային քարտեզների վր աշխատլու ունակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սույն աշխատանքը՝ մենք հնարավորություն ունեցանք ծանոթանալ աշխարհագրություն գիտության ծագմանն ու ձևավորմանը: Սակայն դրա հետ մեկտեղ նաև կարողացանք բացահայտել աշխաչհագրության ուսումնասիրության առարկան, նպատակները, դրա ձևավորման անցած ուղղին ու կայացման պատմությունը, որը մեզ հնարավորություն ընձեռեց պատկերացում կազմել կյանքի հետ աշխարհագրության ունեցած կապի մասին: Մենք ծանոթացանք ոչ միայն աշխարհագրության ձևավորման պատմությանը, այլև հնարավորություն ստացանք պատկերացում կազմել աշխարհագրություն դասավանդող ուսուցչի/դասախոսի գործունեության, դասապատրաստման մեթոդներին և նրան ունկնդրող սովորողի (աշակերտի, ուսանողի) դրսևորմանը: Ընդհանուր առմամբ աշխատանքի ուսումնասիրության շնորհիվ մենք շատ բաներ իմացանք ու բացահայտեցինք աշխարհագրության ուսուցման մեթոդների վերաբերյալ:

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիանրի կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին:

Առաջին հերթին ուսուցիչը պիտի հասկանա ՏՀՏ կիրառության առավելությունները և զգա, թե որքանով է այն հեշտացնում թե իր՝ ուսուցչի գործը և թե աշակերտների՝ առարկան հասկանալու , թեմաներն ընկալելու խնդիրը: Բացի դա՝ անհրաժեշտ են համապատասպան պաշարներ և դրանք կիրառելու հմտություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Կ., «Պատանի աշխարհագրագետ», Երևան, 1985:
2. «Աշխարհագրության դերը և գլխավոր խնդիրները» http://p666666.blogspot.am/2014/03/blog-post_21.html?m=1 (21. 03. 2014)
3. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան, 2013:
4. Սարգսյան Խ., «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա», Երևան, 2002:
5. Баранский Н., «Современные проблемы географии», Москва, 1964.
6. «География в современном мире» http://files.school-collection.edu.ru/dlrstore/00000c51-1000-4ddd-517d-3600483aebf5/01.htm (08. 05. 2017)
7. Петрова Е., «Теория и методика обучения географии», Томск, 2010.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված1

Օրվա դասի պլան **ամիս, ամսաթիվ՝**

Ուսուցիչ՝

Առարկա	**Աշխարհագրություն**
Դասարան և կիսամյակ	**1-ին կիսամյակ** **7-րդ**
Թեմայի գլուխ և թեմա	**Բնակչության ռասայական, ազգային և կրոնական կազմ**
Օգտագործվող նյութեր	**Դասագիրք՝ Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. ՀովսեփյանԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7 Հասարակական աշխարհագրություն Աշխարհի ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ 2018, աշխարհի քաղաքական քարտեզ, թվային ատլասներ, ուրվագծային քարտեզներ, համակարգիչ, գրատախտակ**
Ամբողջական պատկեր և	**Երեխաների մոտ պատկերացում ձևավորել աշխարհի բնակչության վերաբերյալ: Սովորեցնել,**

դասի նպատակ	թե ի՞նչ է ուսումնասիրում բնակչության աշխարհագրությունը: Ներկայացնել բնակչությունը որպես նյութական արտադրության կազմակերպող և միևնույն ժամանակ վերջինիս արդյունքում գոյացող բարիքների հիմնական սպառող: Բացատրել մարդահամարի կազմակերպման ընթացքը, ինչպես նաև այն համաշխարհային հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են բնակչության թվաքանակի աճով:
Վերջնարդյունքներ	Ա-մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Ի՞նչ է ռասան: Որո՞նք են ռասայական հատկանիշները և տեղաբաշխումը կկարողանա Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան օգտվել թվային նո տեխնոլոգիաներց Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան հաշվարկել աշխարհի բնակչության , ազգային և կրոնական կազմով պայմանավորված հիմնախնդիրների հետևանքները, դրանց լուծման ուղիների կարևորությունը մարդկության բարեկեցիկ ապագայի կառուցման համար:
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	«Ինտերակտիվ», «Որոնողական», «վերլուծական», «իլյուստրացիա»
Տերմիններ	Ռասաներն ընդհանուր ծագմամբ, ինչպես նաև ժառանգաբար փոխանցվող արտաքին

	հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խմբեր են:
Տնային աշխատանք	Ուրվագծային քարտեզները գունավորել ըստ այս հարցերի Նշե՛ք աշխարհի խոշորագույն լեզվաընտանիքները, լեզվախմբերը և լեզուները: Նշե՛ք համաշխարհային կրոններն ու դրանց տարածման շրջանները: Ցո՛ւյց տվեք դրանք ուրվագծային քարտեզի վրա:

Հավելված 2

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան և կիսամյակ	1-ին կիսամյակ 7-րդ
Թեմայի գլուխ և թեմա	Տարաբնակեցում քաղաքային և գյուղական բնակավայրեր
Օգտագործվող նյութեր	Դասագիրք՝ Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. ՀովսեփյանԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7 Հասարակական աշխարհագրություն Աշխարհ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ 2018

	, աշխարհի քաղաքական քարտեզ, թվային ատլասներ, ուրվագծային քարտեզներ, համակարգիչ, գրատախտակ
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	Երեխաների մոտ պատկերացում ձևավորել տարաբնակեցման մասին: Սովորեցնել, Ի՞նչ է տարաբնակեցումը: Որո՞նք են տարաբնակեցման ձևերը: Ե՞րբ և ի՞նչ գործոնների շնորհիվ են զարգացել քաղաքները: Նշե՛ք քաղաքների զարգացման առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում:
Վերջնարդյունքներ	Ա-մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել Ի՞նչ է տարաբնակեցումը: Որո՞նք են քաղաքային և գյուղական բնակավայրերը Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան օգտվել թվային նոր տեխնոլոգիաներց Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան պարզել որո՞նք են քաղաքների և քաղաքների բնակչության բաժնի աճի՝ որպես համաշխարհային երևույթի դրսևորման հիմնական ուղղությունները
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	«Ինտերակտիվ», «Որոնողական», «վերլուծական», «իլյուստրացիա»
Տերմիններ	Բնակավայրերի տեսակները: Մարդիկ ի սկզբանե ապրել են որոշակի բնակավայրերում՝

	ժամանակավոր կամ մշտական: Պատմական զարգացման ընթացքում բնակավայրերը փոխել են իրենց բնույթը, արտաքին տեսքն ու չափերը:
Տնային աշխատանք	**Ուսումնասիրել՝** **Ինչո՞ւ են առաջանում քաղաքային կուտակումներ: Թվարկե՛ք աշխարհի խոշորագույն քաղաքային կուտակումները:** **Ի՞նչ ցուցանիշներով կարելի է դասակարգել և խմբավորել քաղաքները: Նշե՛ք գյուղական տարաբնակեցման ձևերը և դրանց տարածման շրջանները:**

Հավելված 3

Առարկա	**Աշխարհագրություն**
Դասարան և կիսամյակ	**1-ին կիսամյակ** **7-րդ**
Թեմայի գլուխ և թեմա	**Բնկան պայմաններ և ռեսուրսներ բնական ռեսուրսների խմբավորում**
Օգտագործվող նյութեր	**Դասագիրք՝ Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. ՀովսեփյանԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7 Հասարակական աշխարհագրություն Աշխարհ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ 2018** **, աշխարհի քաղաքական քարտեզ, թվային ատլասներ, ուրվագծային քարտեզներ, համակարգիչ, գրատախտակ**
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	**Երեխաները կարողանան դասակարգել բնական ռեսուրսների նկատմամբ ըստ մարդկանց պահանջարկի խմբերի:**

Վերջնարդյունքներ	**Ա-մակարդակ՝ սովորողները կկարողանան նկարագրել բնական ռեսուրսների տեսականին և քանակը** **Բ-մակարդակ՝ սովորողները կկարողանան օգտվել թվային նոր տեխնոլոգիաներց** **Գ-մակարդակ՝ սովորողները կկարողանան պարզել ի՞նչ է բնական պայմանը, ի՞նչ է բնական ռեսուրսը**
Դասի ընթացք /ընտրված մեթոդներ/	**«Ինտերակտիվ», «Որոնողական», «վերլուծական», «իլյուստրացիա»**
Տերմիններ	**Բնական պայմաններ: Դուք գիտեք, որ երկրագնդի աշխարհագրական թաղանթը, նրա բնածին ոլորտները՝ քարոլորտը, մթնոլորտը, ջրոլորտը, կենսոլորտը, ստեղծում են այն միջավայրը, որտեղ ձևավորվել և զարգանում է մարդկային հասարակությունը: Այդ միջավայրը կազմող բնական որոշ տարրեր, օրինակ՝ Արեգակից և Երկրի ընդերքից ստացվող էներգիան, մթնոլորտային տեղումների քանակը, մակերևութային ջուրը, Երկրի մակերևույթի բնույթը, օրգանական աշխարհը, բնական միջավայրում ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն են ստեղծում այդ միջավայրում մարդու ապրելու և կենսագործունեության համար: Այդ բոլորը միասին կոչվում են բնական պայմաններ**

Տնային աշխատանք	**Լուծել խնդիր՝** **Երկիրն ունի 200 մլն տ պղնձի պաշարներ, որոնցից տարեկան արդյունահանման ծավալը կազմում է 2,5 մլն տոննա: Երկրի բնակչությունը կազմում է 4 մլն մարդ: Որոշե՛ք երկրի՝ պղնձի պաշարներով ապահովվածությունը**